# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

"23" 04 2019 թ. N 06-Ն

ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 1064-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Փոստային կապի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի <<դ>> կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «2019 թվականի փոստային վճարման պետական նշանների թեման, գործողության մեջ դնելու ժամկետը, անվանագինը և տպաքանակը հաստատելու մասին» N 1064-Ն հրամանի հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ <<4.11>> կետով.

<<

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4.11 | Եվրոպայի խորհուրդ | 1 նամականիշով բացիկ | II եռամսյակ | 240 | 1 000 |

>>

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Մահաթմա Գանդիի ծննդյան 150-ամյակը թեմային նվիրված <<1869-1948. ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ. MAHATMA GANDHI>> նամականիշի, համաձայն N 1 հավելվածի.

2) Եվրոպայի խորհուրդ թեմային նվիրված <<ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԵՎՐՈՊԱՆ. OUR RIGHTS,

OUR FREEDOMS, OUR EUROPE. 1949-2019. COUNSIL OF EUROPE>> 1 նամականիշով բացիկի, համաձայն N 2 հավելվածի.

3) Հրշեջներ թեմային նվիրված <<ՀՐՇԵՋՆԵՐ. FIREFIGHTERS>> նամականիշի, համաձայն N 3 հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝

1) Մահաթմա Գանդիի ծննդյան 150-ամյակը թեմային նվիրված <<1869-1948. ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ. MAHATMA GANDHI>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 650 դրամ, տպաքանակը՝ 40 000 հատ.

2) Եվրոպայի խորհուրդ թեմային նվիրված <<ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԵՎՐՈՊԱՆ. OUR RIGHTS, OUR FREEDOMS, OUR EUROPE. 1949-2019. COUNSIL OF EUROPE>> 1 նամականիշով բացիկը, սահմանելով անվանագինը՝ 240 դրամ,տպաքանակը՝ 1000 հատ.

3) Հրշեջներ թեմային նվիրված <<ՀՐՇԵՋՆԵՐ. FIREFIGHTERS>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 330 դրամ, տպաքանակը՝ 30 000 հատ:

**ՆԱԽԱՐԱՐ** **Հ.ԱՐՇԱԿՅԱՆ**

**“23” 04 2019թ**

**ք. Երևան**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված 1
ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի
2019թ մայիսի 23-ի թիվ 06-Ն հրամանի






ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված 2
ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի
2019թ ապրիլի 23ի թիվ 06-Ն հրամանի

Դիմերես

ՈՒՄԻՑ / FROM




ՈՒՄ / TO

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

*ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ,*
*ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԵՎՐՈՊԱՆ*

ՀԱՅՓՈՍՏ HAYPOST

Հայփոստ ՓԲԸ, 2019, տպաքանակը 1000
Haypost CJSC, 2019, print-run 1000

№ 0000

Դարձերես



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված 3
ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի
2019թ ապրիլի 23-ի թիվ 06-Ն հրամանի




